

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄՈՋԱԿ ԵԿԱՐՁՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ*

ԳԱՌՆԻԻ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՄՈՋԱԿԱՆ

Վերջին տարիներս Հայաստանում կատարված հնագիտական պեղումները խոշոր նշանակություն ունեցան հայ ժողովրդի հնագույն և հին շրջանի նյութական ու մշակութային արվեստների ուսումնասիրության համար:

1949 թվականից սկսած Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի կողմից ամեն տարի պարբերաբար Գառնիում կատարվող հնագիտական պեղումները ցույց տվեցին, որ հեղինակական դարաշրջանի հասարակության բնորոշ գծերով հայկական բարձր մշակույթ է գոյություն ունեցել մեր թվականությունից առաջ 4—1 դարերում:

Ըստ մեր նշանավոր պատմագիր Մովսես Խորենացու, Գառնի հիմնադրել է Գեղամ հաճապետը մեր թվականությունից 1900 տարի առաջ, Գառնի ամրոցը կառուցվել է Արմավիրից հետո, Բայց Արտաշատից շատ առաջ: Քաղաքը սկզբում կոչվել է Գեղամի անունով, սակայն Գեղամի թոռ Գառնիկ հաճապետը փոխում է անունը և կոչում իր անունով: «Գեղամ... առ ոտամբ նորին լերին ի ձորակի միում ամրոց շինէ ձեռակերտ մի, և կոչե զանուն նորա Գեղամի, որ յետոյ ի Գառնիկայ թողանէ նորա անուանեցաւ Գառնի»¹⁵: Հռոմայեցի պատմիչ Տակիտոսը մեր

թվականության 50—51 թվականների իրադարձությունների կապակցությամբ խոսում է նաև Գառնիի անառիկ ամրոցի մասին, որ այդ ժամանակ կանգուն է եղել: Այնուհետև մինչև Տրդատ թագավորի ժամանակ (մ. թ. 4-րդ դարը) Գառնին համարյա ամենևին չի հիշվում մեր պատմության մեջ: 1945 թվականին Գառնիում գտնված արձանագրությունից երևում է, որ Տրդատ Ա-ը իր թագավորության 11-րդ դարում վերականգնել է ամրոցը: Ըստ Խորենացու, Տրդատը իր քրոջ՝ Խոսրովիդուխտի համար կառուցում է մի հրաշակերտ ամրոց գեղեցիկ ամառանոցով և արձաններով:

Վերջին տարիներում կատարված հնագիտական պեղումներից պարզվել է, որ Գառնիի ամրոցը կառուցվել է ոչ ուշ, քան 3-րդ դարում (մ. թ. ա.) և ավերվել է հռոմեացիների ձեռքով մեր թվականության 59 թվականին, երբ ավարտվեց նաև Արտաշատը, և ապա վերականգնվել է 1-ին դարի 70-ական թվականներին: Պեղումների ժամանակ հայտնաբերվել են նաև սլարսպի սկզբնական պատի (3-րդ դար մ. թ. ա.) մնացորդները:

Գառնիում ամենից ուշագրավը շատ վաղուց հայտնի բարձրարվեստ քանդակազարդ տաճարն է և ամրոցի ավերակները, որ 1881 թվականին առաջին անգամ այցելել է կոմս Ուլարովը, նպատակ ունենալով որոշ նյութեր հավաքել Մոսկվայի հնագիտական ընկերության համար: Սակայն նրա ուսումնասիրությունը կրել է անցողակի բնույթ և առանձին արդյունք չի տվել:

* Շարունակված ամսագրի 1957 թվականի Ձ Բ-ից.

¹⁵ Մովսես Խորենացի, «Պատմություն հայոց», Ա, գ 12:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի կողմից կատարված պեղումներից պարզվել է, որ այստեղ, ամրոցից հյուսիս-արևելք ընկած հրվանդանի վրա գոյություն է ունեցել մեծ ավան, քաղաքատիպ կենցաղով: «...Բացվել է ամրոցի պարիսպն իր 14 աշտարակներով. բացվել են վեց կոլտուրական շենքեր՝ էնեոլիթյան քարե գործիքներից մետաղե գործիքների անցնելու շրջան, բրոնզե դարյան, հելլենիստական կամ անտիկ շենքեր և երեք միջնադարյան շենքեր, սկսած վաղ միջնադարից մինչև 15—17 դարերը: Պեղված շուրջ 60 գերեզմաններում գտնվել են առաջին դարերի արհեստը, մշակույթն ու կենցաղը բնորոշող շատ ուշագրավ նյութեր»¹⁶:

Գառնիի պեղումների ղեկավար, պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Բ. Ն. Առաքելյանը նորերս հրատարակված իր խիստ արժեքավոր ուսումնասիրության մեջ¹⁷ մանրամասն նկարագրել ու բնութագրել է Գառնիի մոզաիկայի առանձնահատկությունները և կերտման ժամանակաշրջանը:

Գառնիի մոզաիկ հատակը հայտնաբերվել է բաղնիքի նախասենյակում և բռնում է $2,90 \times 2,92$ մետր տարածություն: Հնագույն մոզաիկ հատակների նման, Գառնիի մոզաիկայի հատակի հիմքը չափազանց խնամքով է պատրաստված: Գետինը լավ տոփանված է եղել և երեք շերտ խճաքարերով լցված: Շերտի հաստությունը կազմում է 30—32 սմ, խճաքարերի վրա 14—15 սմ հաստությամբ ավազախոն կրաքար է լցված: Ամենավերևի խավը ունի 3,3 սմ հաստություն և կազմված է կրի, կվարցի, ավազի և մանրած կղմինդրի խառնուրդից: Այսպիսի հիմքը լավ է պահպանում նրա վրա պատրաստված մոզաիկան:

Մոզաիկ հատակի եզրագրողը պատրաստված է ավելի խոշոր քառակուսի քարերից, իսկ կոմպոզիցիոն պատկերի զարդանկարները կերտված են 0,5 քառ. սմ. և ավելի փոքր, մանր քարերից, որոնք ունեն ոչ միայն քառակուսի, այլև եռանկյունի և այլ ձևեր:

Գառնիի մոզաիկան կերտված է բնական քարի զանազան գույնի (մինչև 15 նրբերանգ) խճաքարերից: Սմալտան բոլորովին չի կիրառվել: Հատկանշականն այն է, որ այդ գույնզգույն քարերը ձեռք են բերված տեղում, Գառնի (կամ Ազատ) գետի ձորում, որտեղ արշավախմբի աշխատակից-

ները հավաքել են մոզաիկ հատակում գործադրված համարյա բոլոր գունավոր քարերը: Նույնիսկ հաջողվել է հայտնաբերել դեռևս չօգտագործված քարերի պաշարը կամ մնացորդները:

Գառնիի կոմպոզիցիոն հատակակարը, որի մեկ քառակուսի մետր տարածությունը կերտելու համար օգտագործվել է 35—40 հազար խճաքար, ցույց է տալիս մոզաիկ արվեստի զարգացումը հեթանոսական Հայաստանում:

Տալիս ենք Գառնիի մոզաիկայի նկարագրությունը ըստ պրոֆ. Բ. Առաքելյանի:

Մոզաիկայի նյութը վերցված է հունական դիցաբանությունից: Մոզաիկ հատակը բավականին վնասված է, սակայն դա չի խանգարում ընդհանուր պատկերացում կազմելու նրա գաղափարական բովանդակության և ոճի մասին:

Գառնիի մոզաիկ հատակը պատրաստված է բաց կանաչավուն խճաքարերից և պատկերում է ծովը, որի ֆոնի վրա նկարագրված են զանազան աստվածներ: Մոզաիկ հատակի կենտրոնում կա գույնզգույն քարերից մի շրջանակ, որ ունի հյուսածո եզրագրեր, որպիսիք հանդիպում են հին հայկական գերեզմանաքարի վրա և մեր միջնադարյան մանրանկարչության մեջ: Կենտրոնի հյուսածո շրջանակում կերտված են մի եղջերավոր տղամարդու և մի կնոջ դիմանկարներ: Տղամարդու պատկերը խիստ վնասված է, սակայն երևում են գիսախոփ մազերը, ճակատը և վերև սևեռած վճիտ աչքերը՝ քթի վերնամասի հետ միասին: Տղամարդու զլխի մոտ հունարեն գրված է մի բառ՝ «Օվ-կիանոս» — ΩΚΕΑΝΟΣ: Կնոջ նկարը համեմատաբար լավ է պահպանված. նկարի կողքին կա հունարեն մենագրություն՝ ΘΑΛΑΣΣΙΑ (Տալասա) — «Ծով»: Այս կոմպոզիցիոն հատակակարի կենտրոնի շրջանակի շուրջը նկարված են ծովային և այլ աստվածներ, նայադներ, որոնք նստած են իխտիոկենտավրների և ձկների վրա:

Մոզաիկ հատակի հյուսիսային մասում ձախից աջ պատկերված է (ձախ անկյունում) նուրբ և երկար մի ձուկ, որից աջ՝ մի տղամարդ՝ թևերը տարածած: Աջ ձեռքով՝ երևում է երեք մասից կազմված մի ձվաձև առարկա: Առաջին դիմանկարից դեպի ձախ կա մակադրություն՝ ΒΙΘΟΣ — «խորություն», — ըստ երևույթին, ծովի խորության հասկացողության անձնավորում է, իխտիոկենտավրի տեսքով:

Աջ կողմում նկարված է մի գեղեցիկ կնոջ դեմք, մազերը առատորեն ուսերի վրա փռ-

¹⁶ «Սովետական գրականություն և արվեստ» ամսագիր, Երևան, 1955 թ., էջ 137:

¹⁷ Вестник древней истории, 1956, № 1, стр. 143—156.

ված: Ձախ ուսի վրա նկատելի է վերարկովի վերնամասը, որ մեջքից կախ է ընկել: Գլխի աջ կողմում կա մակագրություն՝ ΓΑΛΗΝΗ — «Մովսիսի խաղաղություն», որ նայողների անուններից մեկն է: Նա նստած է իխտիոկենտավրի մեջքին և ձախ ձեռքում բռնել կենտավրի մեջքին և ձախ ձեռքով: Իխտիո- է ինչ-որ առարկա տուփի տեսքով: Իխտիո- կենտավրի տակ նկարված են ձկներ՝ տար- րեր նբերանգներով:

Երրորդ դիմանկարից պահպանվել է գլխի մի մասը, մի ձեռքը, որ բռնել է ինչ- որ առարկա՝ գավազանի տեսքով, իսկ ներ- քև նկատվում է ձիու երկու ոտք: Այս դիմա- նկարի գլխից դեպի ձախ կա մակագրու- թյուն՝ ΓΑΛΙΚΟΣ «Գլավիկոս», ծովային աս- տուծո անուն, որ հանդիսանում է ձկների և ծովագնացության հովանավորը: Հավանորեն, Գլավիկոսը պատկերված է իխտիոկենտավրի տեսքով: Նրա ոտքերի մոտ, կենտրոնական շրջանակի վերև, նկարված են երկու ձկներ:

Չորրորդ դիմանկարը գրեթե լիովին փշա- ցել է և ոչինչ չի երևում:

Հինգերորդ դիմանկարից պահպանվել է գլխի մի մասը՝ ձախ աչքի հետ և վար կա- լած ձախ ձեռքը, ինչպես և ձիանման մի ոտքը: Անկասկած, սա ևս ինչ-որ մի աստուծո նկար է՝ իխտիոկենտավրի տեսքով: Գլխից դեպի ձախ պահպանվել են անվան տառերի մնացորդները, որից կարելի է ջոկել միայն H տառը: Հնարավոր է, որ այստեղ գրված է եղել [H]H[ΔΕΥΣ]: Սրա ուսի վրա հանդ- լում է վեցերորդ անձնավորության ձեռքը:

Վեցերորդ դիմանկարը լիովին պահպան- վել է: Սա իխտիոկենտավրի վրա նստած կի- սամերկ կնոջ դիմանկար է, որ իր ձախ ձեռ- քում բռնել է ինչ-որ առարկա, թերևս հա- յելի: Դիմանկարի գլխից աջ գտնված մակա- գրության համաձայն՝ դա Ֆետիդան է (ΘΕΤΙΣ), ծովային ծեր նայողի դիցաբա- նական Պելեյա թագավորի կնոջ և Աթլեթի մոտ հիսուն աղջիկներից ավագը:

Ֆետիդայի անվան վրա նկարված է սըր- տաձև մի դեմք, իսկ ետևում՝ ձուկ: Իխտիո- կենտավրի պոչից ներքև, որի վրա նստած է Ֆետիդան, նկարված է դելֆինի պատկերը՝ ծաղկաձև պոչով: Դելֆինի վրա կա մակա- գրություն՝ ΑΙΓΙΑΛΟΣ — «Մավափ», Հունական դիցաբանության մեջ ΑΙΓΙΑΛΟΣ Ինակի և Օվկիանիդայի Մելեյի որդին է, կամ այլ մեկ- նուկյամբ՝ Ֆորնեի և Պիֆոյի որդին:

Մոզաիկ հատակի վրա, որ գնում է արևել- լան պատերի երկայնքով, պահպանված են իտալյան պատկերները:

Նավի ետևի կողմից դեպի ձախ նկարված է հսկայական դելֆինի գլուխ կամ այլ ծովա- յին աստված: Նավի վրա կանգնած է թե-

վավոր մի մերկ ձկնորս, որ քաշում է վրան երկու ձուկ ընկած ուռկանը: Ձկնորսի գըլ- խի վերև կա մակագրություն՝ ΚΑΛΛΟΣ — «Գեղեցկություն», դա ցույց է տալիս, որ «Գեղեցկություն» հանդիսանում է վերացական հասկացողության անձնավորումը: Ձկնորսի նկարից դեպի աջ պահպանվել է իխտիո- կենտավրի մեջքին նստած կնոջ հագուստի մի մասը, իսկ նրա ներքև նկարված են երեք ձկներ, իխտիոկենտավրից ավելի աջ նկար- ված է մի այլ դեմք, որ իր պարզած երկու ձեռքերում բռնել է բաժակի նմանող առար- կաներ: Նրա գլխից դեպի ձախ կա մակա- գրություն, որից մնացել է միայն 3 տառ... ΛΙΣ: Այդ նկարի ներքև նորից նկարված է ձուկ: Մեծ շրջանակի աջ անկյունում պահ- պանված է մի գեղեցիկ գլուխ ևս, աչքերը վերև հառած տեսքով, հավանաբար դա ևս նայատներից մեկն է, որ նստած է մեր նոր նկարագրած իխտիոկենտավրի մեջքին:

Մոզաիկայի մեծ շրջանակի հարավային կողմում մեծ վնասվածք կա, բայց և այն- պես պահպանված են մի քանի նկարներ: Գոտու ձախ անկյունում կա կանացի մի դեմք: Այդ նկարից դեպի աջ կա երկար հա- գուստով մի դիմանկար, որի գլխից դեպի աջ կա մակագրություն՝ ΠΑΩΔ: Իրար կողքի կան երեք դիմանկարներ: Իխտիոկենտավրի մեջ- քին նստած կնոջ դեմքի մոտ կա մակա- գրություն՝ ΑΓΡΙΟΣ, հավանաբար Դիոնի- սին է ավանդվում: Մի այլ կանացի կնոջ գլխի մոտ գրված է ΕΠΙΘΥΜΙΑ — «Ցանկու- թյուն»: Դրա կողքին քարի վրա նստած է մի մերկ տղամարդ և ձուկ է որսում: Նրա մոտ նկարված են մի քանի ձկներ:

Մոզաիկայի արևմտյան կողմում մի մեծ վնասվածք կա, որի մեջտեղում մնացել է միայն մարդկային գլխի վերևի մասը, մա- կագրության հետքերով, որից մնացել են ΡΟ տառերը և 3-րդ տառի մի մասը: Հավանա- բար, մոզաիկայի վնասված տեղում նկար- ված է եղել սիրո աստված էրոսը, որը հաս- տուծո նկարով: Ավելի աջ պահպանվել է մարդու գլխի մազերի մի մասը՝ ΠΟΘΟΣ մա- կագրությամբ: Պեֆո, Պոֆոս և Հիմենեյ, ըստ դիցաբանության, ուղեկցում են գեղեց- կության և սիրո աստվածուհի Աֆրոդիտին: Պրոֆ. Բ. Առաքելյանը ենթադրում է, որ Հի- մենեյի և Աֆրոդիտի դիմանկարներ են պատկերված եղել մոզաիկայի մեծ վնաս- վածքի մասում, էրոսից դեպի ձախ:

Մոզաիկայի գլխավոր դեմքը հանդիսանում է Օվկիանը, ջրի աստվածը, 3000 գետերի և 4000 օվկիանիդների հայրը: Ըստ այլ են- թադրության, Օվկիանը բոլոր աստվածների աստվածն է: Օվկիանին կից գետեղված է

Աֆրոդիտեի մայր Մովի պատկերը: Նրանց շուրջը նկարված են ծովային աստվածներ, նայադներ և ձկներ:

Այսպիսով, Գառնիի մոզաիկ հատակում պատկերված են մոտ 21 դիմանկարներ, որոնցից մի քանիսը խոշոր կամ փոքր չափով վնասված են: Կյանք, սեր, բեղմնավորում— ահա Գառնիի մոզաիկայի հիմնական բովանդակությունը:

Չափազանց հետաքրքրական է մոզաիկայի կենտրոնական հյուսածո շրջանակի մեջ հղած Օվկիանի և Մովի գլխավերև թողած մակագրությունը՝ «Աշխատեցաք և ոչինչ կալաք»: Մ. Շահինյանը «Իզվեստիա» թերթում գրած իր հոդվածում ենթադրում է, որ այդ հանդիսանում է ստրուկների կամ զինվորական զերիների բողոքը: Պրոֆ. Բ. Առաքելյանը ենթադրում է, որ դա քիչ հավանական է: Դժվար թե մոզաիկայի կենտրոնական մասում նրանք կարողացած լինեն թողնել այդպիսի մակագրություն: Հնարավոր է, որ մոզաիկ հատակ ունեցող բաղնիքը պատկանելիս է եղել թագավորին և նկարիչները (դատելով մոզաիկ հատակի նկարներից և մակագրություններից) աշխատել են անվարձ, որպեսզի հատակ ուշադրություն և ողորմածություն արժանանան սփականատիրոջ կողմից: Այսպիսի դեպքերում ականավոր նկարիչները կարող էին մակագրություն թողնելու իրավունք ստանալ, հպարտության լիակատար զղացում իրենց հռչակավոր ստեղծագործության համար: Վերջապես, այդ մակագրությունները, որոնք գրված են համբավական եռամետրով, կարող են վերաբերվել Օվկիանի և Մովի գործունեությանը, որոնց վրա և զետեղված է մակագրությունը:

Գառնիի մոզաիկ հատակը, հավանաբար, 4-րդ դարի հինգ սկզբում, քրիստոնեության ընդունումից հետո, անուշադրության է մատնվել: Նրա վրա բավականին հող է լքված եղել և այստեղ, ինչպես անուշադրության մատնված տեղում, դեռևս հնում խառույկ են վառել, որից և սևացել է մոզաիկայի կենտրոնական շրջանակի հարավ-արևմուտյան անկյունը:

Գառնիում մոզաիկայի փոքր կտոր է զբաղեցրած նաև երկրորդ սենյակի որմնախորշում, սակայն խիստ վնասված վիճակում:

Խնչ տեխնիկայով է կառուցված Գառնիի մոզաիկ հատակը:

Այն հանգամանքը, որ Գառնիի մոզաիկ հատակն ունի բարդ կառուցվածք, մոզաիկային դիմանկարներ, կենդանական նկարներ ու ծովային տեսարան, առաջին հերթին ցույց է տալիս, որ այդ մոզաիկան հիմնականում կերտված է «օպուս վերմիկուլատում» տեխնիկայով: Այս տեխնիկայով կառուցված մո-

զաիկաները աչքի են ընկնում հատկապես հելլենական դարաշրջանում, երբ մոզաիկ նկարիչը կերպարներ ու տեսարան ստեղծելու համար կիրառել է զանազան գույնի բնական քարերի մանր խորանարդիկներ ու քառակուսիներ: Այս տեխնիկայով կերտված մոզաիկան լայն տարածում էր գտել մեր թվարկությունից առաջ 4—1-րդ դարերում՝ Ալեքսանդրիայում, Պերգամոնում, Դելոս կղզում, Պոմպեյում, Հոմոնում և հելլենական դարաշրջանի այլ հին քաղաքներում:

Այս տեխնիկայով կառուցված մոզաիկ հատակների հիմնական շինանյութը եղել են սովորաբար մեկ կամ կես խորանարդ սմ. չափի խորանարդիկները կամ քառակուսիները, որոնք պատրաստվում են զանազան գույնի բնական քարերից: Եթե «օպուս բարբարիկում» տեխնիկայով պատրաստված մոզաիկ հատակները, որոնք ավելի հին դարաշրջանի գործեր են, կերտված են քարի ավելի խոշոր կտորներից և մի քանի գույներից, ապա «օպուս վերմիկուլատում» տեխնիկայով կառուցված մոզաիկ հատակների շինանյութը բաղկացած է շատ ավելի մանր ու բազմագույն խճաքարերից, որոնք ունեն լավ հղկված կողքեր, որը հնարավորություն է տալիս մանրաքարերն ավելի հաջող և կիպ կապել իրար, հետևաբար ավելի հաջող կերպար կամ տեսարան ստանալ:

«Օպուս բարբարիկում» տեխնիկայով պատրաստված մոզաիկաներում մենք տեսնում ենք հակառակը: Այստեղ մոզաիկան կառուցված է խոշոր քարերից, ընդամենը 4—6 գույների սահմանափակությամբ, որը հնարավորություն չի տալիս արվեստի ավելի կատարյալ գործեր ստեղծել «Օպուս բարբարիկում» տեխնիկայով կերտված մոզաիկ հատականկարների համար շինանյութ են ծառայել տարբեր ձևի ու չափի բնական խճաքարերը, որոնք դեռևս մշակման չէին ներթափանցում: Բացի այդ, այս տեխնիկայով պատրաստված մոզաիկայի շինանյութի մեջ գործադրվում էին լավ թրծված վառ կարմիր գույնի խեցիկներ: Պարզ է, որ այս տեխնիկան ավելի հետամնաց է եղել, որը և հնարավորություն չի տվել մոզաիկ նկարչին բարդ կոմպոզիցիայի մոզաիկաներ կերտելու:

Գառնիի մոզաիկան իր բարդ կառուցվածքով, իր բարձր տեխնիկական և նկարչական վարպետությամբ մոտենում է այն անտիկ մոզաիկ նկարներին, որոնք պատրաստված են «օպուս վերմիկուլատում» տեխնիկայով: Գառնիի մոզաիկայում չի կիրառվել սմալտան, իր թափանցիկ ու խուլ նրբերանգներով, որոնք մոզաիկային տալիս են բացառիկ գեղեցկություն: Չնայած այն հանգամանքին, որ Գառնիում, ինչպես նաև հին Հայաս-

տանի քաղաքներում բավականաչափ բարձր զարգացման է հասած եղել ապակեգործությունը, այնուամենայնիվ, զարմանալի է, որ Գառնիի մոզաիկ հատակում բացակայում է գունավոր ապակու կիրառումը որպես շինանյութ: Դա նույնպես վկայում է մոզաիկայի հնույթյան մասին: Վերջինս հնարավորություն կտար հունական առասպելներից վերցված նյութ ունեցող Գառնիի մոզաիկան ներբերանգնելով ավելի շուրջուցիչ դարձնելու:

Գառնիի մոզաիկ հատակը իր նյութերով, գաղափարական բովանդակությամբ և ոճով տարբերվում է հին Հայաստանում եղած մոզաիկաներից: Ինչպես պրոֆ. Բ. Առաքելյանն է գտնում, անտիկ աշխարհում չկա մի այնպիսի մոզաիկ հատակ, որ իր նյութով և կառուցվածքով լիակատար նման լինի Գառնիի մոզաիկային, սակայն որոշ մանրամասներով նա նման է Անտիոքի մոզաիկաներին, որտեղ սովորական երևույթ է Օվկիանի և Մովի պատկերումը: Անտիոքի մոզաիկաներում, Գառնիի նման, կան ժայռի վրա նստած ձկնորսներ, որոնք ձուկ են որսում, այդ մոզաիկաներում պատկերված են նաև փոքր տուփեր, ծալված գլխով զավազաններ, հալելի և այլ իրեր՝ մարդու ձեռքում բռնած: Դաֆնի № 1 տան կամ վիլլայի մոզաիկաները Անտիոքի մոզաիկաների հետադրույթով Դ. Լևինը թվագրում է 306—337-ին (Կոնստանդին Ա-ի ժամանակները), իսկ մեկ ուրիշ հետադրույթ՝ Կ. Դ. Մորեյը՝ 3-րդ դարին: Անելով այսպիսի համեմատություններ, պրոֆ. Բ. Առաքելյանը Գառնիի մոզաիկան դասում է այդ դարին: «Գառնիի մոզաիկան մեզ թվում է Դաֆնիին միաժամանակյա է, — գրում է նա: — ... Գառնիի մոզաիկան տեխնիկայի կատարման ու ոճի տեսակետից նույնպես մոտենում է ջերաշակա՞ն մոզաիկաներին, որոնք, ըստ հրատարակչի կարծիքի, պատճենահանված են 4-րդ դարում 1-ին կամ 2-րդ դարերի նմուշներից»¹⁸: Օվկիանի և Մովի պատկերներ, տրիտոնների և նայադների, ձկան որսի տեսարանի, ձկների, դելֆինների և մյուս ծովային աստվածների մոզաիկ պատկերներ կան Իտալիայում և Հյուսիսային Աֆրիկայում, Բալկանյան երկրներում, Փոքր Ասիայում և հետագայում՝ Բյուզանդիայում:

Գառնիի մոզաիկ հատակում կիրառված է երկու ձևի տեխնիկա: Վարդապետյն լայն եղ-

րազարդը պատրաստված է «օպուս տեսալատում» տեխնիկայով, իսկ բոլոր պատկերները կերտված են առավել կատարյալ տեխնիկայով՝ «օպուս վերմիկոպատում»-ով: Պետք է նկատել, որ ոչ միայն Գառնիի, այլև հայկական մյուս մոզաիկաների կոմպոզիցիոն պատկերները (Դվինի, Նորուսադեմի) կերտված են այդ երկու տեխնիկայի կիրառման օգնությամբ:

Գառնիի մոզաիկ հատակի կերտման ժամանակաշրջանը ճշտելու համար, պրոֆ. Բ. Առաքելյանը իր շափազանց արժեքավոր հոդվածում այդ մոզաիկան շատ մանրամասնությամբ ներկայացնում է այլերկրյա մոզաիկաների հետ, հաշվի առնելով մոզաիկ պատկերների անձնավորումը, կառուցվածքի առանձնահատկությունները, հեթանոսական բնույթը, մակագրությունները, գրի ձևերը և այլն: Նա գալիս է այն փորձակացության, որ Գառնիի մոզաիկան կերտված է 3-րդ դարի վերջում կամ 4-րդ դարի սկզբում, Տրդատ Գ թագավորի իշխանությունում տարիներում, երբ դեռ նա քրիստոնեություն չէր ընդունել: «Գառնիի մոզաիկայում ուժեղ են հելլենական դժբերք, որոնք տեսակափոխվում են Հայաստանում և հարևան երկրներում կուլտուրայի ու արվեստի զարգացման յուրահատուկ ընթացքի հետևանքով»: Ըստ պրոֆ. Բ. Առաքելյանի, անտիկ դիցաբանություններից վերցրած նյութով և հունական մակագրություններով մոզաիկաների հայտնաբերումը Հայաստանում չի կարելի անսպասելի համարել, որովհետև 3—4-րդ դարերում հելլենական մշակույթը բավականին ուժեղ է եղել: Եվ պատահական չէ, որ Գառնիի մոզաիկայում լիովին բացակայում են լատինական անուններ, հասարակ անուններ և գրավոր նշաններ, չնայած պատահում են Հայաստանում և լատինական մակագրություններ:

Այսպիսով, Գառնիի մոզաիկան հանդիսանում է հելլենական դժբերք ունեցող կուլտուրայի հուշարձան: Պրոֆ. Բ. Առաքելյանը ենթադրում է, որ Գառնիի մոզաիկան կերտած կլինեն Արտաշատի, Վաղարշապատի կամ այլ քաղաքների բնակիչ մոզաիկ նկարիչներն ու վարպետները:

Գառնիի մոզաիկան հեթանոսական դարաշրջանի հայ արվեստի հուշակապ կոթողն է, որ համաշխարհային նշանակություն ունի:

¹⁸ Вестник древней истории, 1956, № 1, стр. 151—152.